Արմենուհի ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վ. ԱՆԱՆՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Խոսել Վախթանգ Անանյանի վեպերի լեզվական առանձնահատկությունների մասին ընդհանրապես, նշանակում է ներկայացնել ժողովրդի լեզուն ու նրա արտահայտչամիջոցները, քանզի Անանյանի լեզվամտածողությունը ժողովրդական է՝ պարզ ու անպաճույճ, հասու թե՛ մեծերին և թե՛ փոքրերին: Դիպուկ է նկատել գրականագետ Ս. Աղաբաբյանը. «Հայրենի բնությունը, նրա գրկում ապրող կենսուրախ ու հոգով առողջ մարդկանց կենցաղը, ժողովրդական կենդանի լեզուն, ժողովրդի բառ ու բանը, ժողովրդական ասմունքողների արվեստը, ահա Անանյանի ստեղծագործության և՛ տարերքը, և՛ սկզբնաղբյուրը»:[1]

Հենց այդ ժողովրդական լեզվամտածողության և լեզվազգացողության արդյունքն են Վ. Անանյանի արձակում հետաքրքիր դրսևորումներ ունեցող մի շարք շարահյուսական իրողություններ, և դրանց թվում նաև հարցական նախադասությունների տարբեր տեսակների (հատկապես ճարտասանական հարցումների) առատ կիրառություններ, որոնք Անանյանի լեզվում ինքնանպատակ չեն որպես լեզվական տվյալ իրողության սոսկ փաստացի դրսևորում, այլ որոշակի ինքնատիպություն ունեն և ծառայում են նրա վիպական խոսքի ոճական գունավորմանը:

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է, որ հարցական նախադասությունների ձևավորման գործում մեծ դեր ունեն «հատուկ հարցական արտաբերությունը /հնչերանգը-Ա.Ա./ և առանձնահատուկ հարցական բառերը (դերանուններ, շաղկապներ, մակբայներ), որոնց վրա էլ հաճախ ընկնում է հարցական արտաբերությունը»:[2] Միևնույն ժամանակ հարցական նախադասություններում, որոնք խոսակցական տարբեր իրավիճակներում ծառայում են համապատասխան վերաբերմունքի, հույզի կամ զգացմունքի արտահայտմանը, պայմանավորված նյութի թելադրանքով, գրողի աշխարհայացքով կամ խոսակցական իրադրությամբ հարցական հնչերանգով կարող է օժտվել նախադասության ցանկացած անդամ: Ավելին, ժողովրդախոսակցական լեզվում, ինչպես վկայում է նաև Վ. Անանյանի ստեղծագործությունների լեզվի քննությունը, հարցական նախադասությունները ձևավորվում և դրսևորվում են ոչ այնքան հարցական իմաստ արտահայտող բառերի միջոցով, որքան տրամաբանական շեշտի և համապատասխան հնչերանգի շնորհիվ, երբ հարցական հնչերանգով կարող է արտաբերվել ցանկացած բառ. «-Ուրեմն <u>առողջ է՞ք</u>...ոչինչ <u>չպատահե՞ց</u>...» /ՄԱ,161/, «Ինձ <u>ձեռ ես առնո՞ւմ</u>, տո փսլնքոտ ծծկեր...» /ՄԱ,161/, «-Ջահել ժամանակդ <u>ա՞ռ</u> շավիղով գնացիր, պապի՛» /ՄԱ,158/:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է տարբերակել հարցական նախադասությունների երեք տեսակ՝ *հավաստիական կամ բուն հարցական, լրացական և ճարտասանական կամ հռետորական*:

Բուն կամ հավաստիական հարցումները Վ.Անանյանի վեպերում շատ են, և դա բնական է, քանի որ վեպերում հաճախ են երկխոսությունները, չիմացածի մասին հետաքրքրվել իմանալու պահերը. «Իսկ սա ո՞վ է, այս փոքրիկը» /Կօմ,65/, «Բռավո, Ճուտիկ, է՞լ ինչ են արել քեզ» /Կօմ,66/:

Առանձին ուշադրության են արժանի այն հավաստիական հարցական նախադասությունները, որոնք բազմեզր են, և հիմնականում բարդ նախադասությամբ արտահայտվում է մի քանի հարցում չիմացածի վերաբերյալ: Այսպիսի բարդ նախադասությունները բնույթով հիմնականում համադասական են, և այդ հարցումները հնարավոր է ներկայացնել նաև առանձին նախադասություններով: Այսպես՝ «-Ո՞վ է քեզ ուղարկել և ի՞նչ խնդիր է տվել,- ձայնը կեղծ խստացրեց խմբապետը» /Կօմ,258/, «Ձեզ մոտ գործերը ո՞նց է, հիմի Դիլիջանն ո՞ւմ ձեռքին է, Ալեքսոլից ի՞նչ տեղեկություն կա, Պետին,

---

[1] *«Գրական թերթ», Եր., 1955, 30 սեպտեմբերի, N 36, էջ 4:*

[2] *Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ 1, Եր., 1958, էջ 14:*

Գիքորը սաղ-սալամա՞թ են...,- վրա տվեց Ակոփն ու անհամբեր պատասխանի սպասեց» /Կօմ,262/,[3] «-Իսկապես,- ինչպես միշտ՝ այս անգամ դարձյալ ուշ գլխի ընկա ես:- Համ էլ ինչո՞ւ էր մթության մեջ մնում, ինչի՞ կրակին մոտեցավ... կամ՝ էս անձրևին, էս խավարին ո՞ւր էր գնում ասեղ մաշկող Սինասը» /Հվիր,173/:

Այս և նման կիրառությունները, հաջորդական հարցումների միջոցով շտապողականության, անհանգիստ լինելու կամ կարճ ժամանակում շատ բան իմանալու ձգտման արտահայտություն են:

Վ. Անանյանի ստեղծագործություններում հաճախ ենք հանդիպում երկբայական վերաբերմունք, երկընտրանք արտահայտող հավաստիական հարցական նախադասությունների: Սրանցում հարցում արտահայտող երկու և ավելի անդամներ իրար հետ կապվում են *թե* շաղկապով, որն իր իմաստով լինելով թեական՝ այդպիսի երանգով է օժտում ամբողջ նախադասությունը: Մենք նախընտրում ենք նման նախադասություններն անվանել *երկբայական հարցական նախադասություններ*: Ս. Աբրահամյանը դրանք կոչում է երկբայական վերաբերմունք և երկընտրանք արտահայտող հարցական նախադասություններ՝ որպես իրարից անկախ հավաստիական հարցական նախադասության երկու տեսակ:[4] Ս.Ղուկասյանն այս նախադասություններն անվանում է «ընտրանքային կամ թե՞ հարցում»,[5] առանձնացնելով դրանց երկու տեսակներ՝ երկեզր և բազմեզր՝ հարցումների թվով պայմանավորված: Ընդ որում, երկեզր հարցման տակ նկատի է առնում միայն այն երկու եզրերը, որոնցից առաջինում տրվում է հարցը իր դրական ձևով, երկրորդում՝ դրա ժխտական ձևն է: Պատասխանողին մնում է ընտրություն կատարել այդ երկու ձևերի միջև՝ ընտրելով կա՛մ դրական, կա՛մ բացասական պատասխանը.[6] «Ախ, սրան էլ վերջ կա՞, թե՞ չէ» /Կօմ,255/, «Կամոն կանգ առավ շեմքում. տատանվում էր՝ մտնի՞ւ, թե՞ոչ» /ՍԱ,87/:

Մենք ևս, ընդունելով նման նախադասությունների բաժանումը երկեզր և բազմեզր՝ տեսակների, երկեզր երկբայական հարցականներ ենք համարում այն նախադասությունները, որոնցում հարցման տակ են առնվում երկու կասկած հարուցող, բայց հավանական եզրերը: Ընդ որում, այստեղ նկատի ենք ունենում ինչպես վերոբերյալ օրինակները և դրանց նմանները, որոնցում ընտրությունը մի բառի դրական և ժխտական ձևերի միջև է, այլև նրանք, որոնք ընտրության երկու տարբեր, իրարից անկախ առաջարկ են ներկայացնում, և կա՛մ պատասխանողը, կա՛մ հենց հարց տվողը պետք է այդ տարբերակներից ընտրի մեկն ու մեկը: Սրանք ևս Ս. Ղուկասյանը դասում է բազմեզր տիպի մեջ: Մինչդեռ սրանք ընտրության մեջ զուգակցվող ձևեր են, անկախ նրանից՝ հականիշ բառերով են, թե իրարից բոլորովին անկախ ձևերով: Մեզ հետաքրքրողը դրանց ձևերի թիվն է: Օրինակ՝ «Ո՞ւր մնացին ընկերները: Արդյոք աղատվեցի՞ն, թե՞ ընկել են գիշակերների ճանկը» /Կօմ,129/, «Եվ այժմ նա անհարմար վիճակում տատանվում էր. շարունակե՞ւ հանգել, թե՞ ետ կանգնել այդ հիմար միջոցից» /ՍԱ,124/:

Ընդ որում, ընտրանք հարուցող երկրորդ եզրը կարող է արտահայտված լինել և բարդ նախադասությամբ, ինչը չի ազդում նրա ընտրության եզրերի թվի՝ վրա: Օրինակ՝ «Ապարատի *չխնոցի՞ն*, թե՞ նրանից, *որ մարդիկ հանմարդկեն չեն հեռանում իր մոտից, բարը ստիպված թռավ*» /ՍԱ,53/:

Երկեզր երկբայական հարցական նախադասությունների ձևավորման գործում հատկապես մեծ է հականիշ բառերի դերը: Այսպես,«Արդյոք հոգնա՞մ էր նա մոտալուտ հաղթանակի հավատով, թե՞ աղտաստվում էր հարազատներին դեռ չտեսած մեռնելու համար» /Կօմ,203/,«-Չգիտեմ, կատա՞ղ է անում, թե՞ լաց է ասում»/ՍԱ,174/,«-Խանգարեցո՞ւ եք եկել, թե՞ օգնելու,-գոռաց բազմության վրա» /ՍԱ, 97/:

Երկեզր երկբայական կառույցը բնորոշ է հատկապես անդեմ հարցական նախադասություններին, որոնք մեծամասամբ ձևավորվում են անորոշ դերբայի դրական և ժխտական ձևերով («Լինե՞լ, թե՞ չլինել»):

---

[3] *Այս և հետագա օրինակներում ընդգծում ենք հարցման բովանդակությունն արտահայտող բառերն ու կապակցությունները՝ հարցումը միշտ ընկալելու նկատառումով:*

[4] *Ս. Աբրահամյան, Հայոց լեզու (Շարահյուսություն), Եր., 2004, էջ 85:*

[5] *Լեզվի և ոճի հարցեր, V, Եր., 1978, էջ122:*

[6] *Օրինակները բերում ենք Վախթանգ Անանյանի ստեղծագործություններից:*

Վ. Անանյանի ստեղծագործություններում երկեզր հարցական նախադասությունները ձևավորվել են.

ա) անորոշ դերբայով՝ «Կամոն կանգ առավ շեմքում. տատանվում էր, մտնե՞լ, թե՞ ոչ» /ՄԱ, 87/:

բ) բայի եղանակային ձևերով՝ «Գիքորը տատանվում էր. առաջ գնա՞, թե՞ վերադառնա» /ՄԱ,196/, «Վերևում պտտվող կռունկը մնացել էր մոլորված՝ խմբի՞ն հետևի, թե՞ հջնի ընկերոջ մոտ» /ՀԳ,130/:

գ) անվանական բաղադրյալ ստորոգյալով՝«-Չէ, ասա քաղշևի՞կ ես, թե՞չէ» /Կօմ,138/:

դ) գոյականի տարբեր հոլովաձևերով, որոնք հանդես են գալիս հիմնականում լրացման դերով՝«Ի՞նչ իմացաք ինչի՞ց է վեր ընկել, քամո՞ց, թե՞ անզգուշությունից» /ՄԱ,150/, «-Առաջ ո՞ր արտը հնձենք, Կատնուտի՞նը, թե՞ Դգեղինը...» /Հվփր,102/:

Բազմեզր երկբայական կամ ընտրանքային են համարվում այն հարցական նախադասությունները, որոնցում ընտրության օբյեկտ են դառնում երեք և ավելի եզրեր: Օրինակ՝ «Բարի նախա՞նձ էր դա, մրցությո՞ն, թե՞ մի այլ զգացմունք,-նա իրեն հաշիվ տալ չէր կարողանում» /ՀԳ,16/, «Չհասկացանք՝ թև՞ն էր վնասվել, հիվա՞նդ էր, թե՞ ուժասպառ էր եղել երկար ճանապարհորդությունից» /ՀԳ,130/, «Աղջկա մատների հպումի՞ց, սրտագին այդ նվերի՞ց, թե՞ Վարսիկի ժպիտից չոբան պատանին շփոթվեց ու շառագունեց» /Կօմ,40/: Սրանցում թվարկվում են բոլոր հնարավոր տարբերակները, և դրանցից մեկի ճիշտ լինելը կվերացնի այդ երկբայական վիճակը:

Վ. Անանյանի վեպերում բավական հաճախ ենք հանդիպում *լրացական հարցական* նախադասությունների, որոնք դրսևորվում են և՛ գրական նորմին համապատասխան լեզվամիջոցներով և՛ խոսակցական ու բարբառային ձևերով: Վերջիններս հատկապես հանդիպում են հերոսների խոսքում՝ կերպարի տիպականացման, տվյալ լեզվական միջավայրի կերտման նպատակով: Օրինակ՝ «-Քանի՞ օրվա ուտելիք դնենք ձեզ հետ» /ՄԱ,217/, կամ՝ «-Ծո օղո՛ւ, ուրկե՞ կուգաս» /Կօմ,227/, «-Մի տես, մա՛մ, դեռ թաց է: Հիմա ձվի դեղնուց չտա՞նք» /ՄԱ,127/, «-Էն սիրուն փոմփոլավոր թռչուններին ի՞նչ են ասում քո գրքում, գիտնական բալա» /ՄԱ,223/:

Ի տարբերություն հավաստիական հարցական նախադասությունների, լրացական հարցական նախադասությունները ենթադրում են պատասխան *այո* կամ *ոչ* պատասխանական բառերով, ինչպես նաև՝ դրանց զուգահեռ հարցման բովանդակությանը համապատասխան պատասխան նախադասությամբ կամ բառով. օրինակ՝ «-Ջանդ դինջացա՞վ... - Հա...լաղաթ տվեց...» /Հվփր, 158/:

Շատ դեպքերում էլ հարցման տակ վերցվող բառն է հաստատական հնչերանգով դառնում պատասխան, որին կարող է հաջորդել կամ չհաջորդել լրացուցիչ տեղեկություն: Այսպես՝ «- Ուրեմն Հայաստանը հիմի կառավարություն ունի՞...

- Ունի,- քմծիծաղ տվեց Գրիգորի ազգական Մկրտիչը» /ՈւՏԿ, 343/, «- Ուրեմն մեր թաքքերը սրանց հարազատներն ե՞ն...

- Հրամանքդ, հարազատներն են»:

Շատ անգամ այսպիսի նախադասություններում պատասխանը հարցով է տրվում: Այսպես՝ «- Ուրեմն քո *մերն է՞լ է խոքթ:*

-*Ինչո՞ւ է խոքթ*,- բողոքեց Արեգնազը» /Հվփր, 108/:

Վ. Անանյանի ստեղծագործության մեջ ոճաարտահայտչական մեծ դեր ունեն *ճարտասանական հարցական* նախադասությունները:

Ժողովրդի ծոցից ելած, նրա բառ ու բանով սնված զավակի՝ Վ. Անանյանի վիպական խոսքը չափազանց հարուստ է ճարտասանական հարցմամբ, ինչի այդքան ազատ ու առատ կիրառումն առաջնահերթորեն պայմանավորված է նրա վեպերի թեմատիկայով: Ե՛վ պատերազմական թեմայով («Կրակե օղակի մեջ», «Դժոխքի դռան գաղտնիքը»), և՛ գիտաարկածային («Սևանի ափին», «Հովազածորի գերիները») և՛ ինքնակենսագրական («Հին վրանի փոքրիկ բնակիչը», «Ո՞ւր են տանում կածանները») բնույթի գործերում նման նախադասությունների օգտագործման նպատակը մեկն է. կենտրոնացնել ընթերցողի ուշադրությունը որևէ հարցի վրա, սրել իրազեկությունը, առաջացնել լարված հետաքրքրություն, որից հետո ցույց տալ դրանց, լուծման ճանապարհը: Իսկ հատկապես գիտաարկածային վեպերում ճարտասանական հարցման առավել հաճախակի գործածությունը պայմանավորված էր նրանով, որ մանկապատա-

նեկան ժանրի այս գործերն իրենց արկածային բովանդակությամբ և սյուժետային կտրուկ փոփոխություններով հանդերձ պահանջում են ոչ միայն առաջադրվող հարցերի ճիշտ, գիտական մեկնաբանություն, արկածային ինտրիգների հմուտ ստեղծում ու լուծում, այլև ունեն նկարագրվող երևույթների ճանաչումը ապահովող դաստիարակչական նշանակություն. ճարտասանական հարցմամբ ընթերցողի ուշադրությունը կենտրոնանում է տվյալ երևույթի վրա՝ չթուլացնելով հետաքրքրությունը մինչև նրա վերջնական պարզաբանումը: Ընդ որում, ճարտասանական հարցումն առատ է ոչ միայն հեղինակի, այլև հերոսների խոսքում՝ ժողովրդականին բնորոշ հետաքրքիր ձևերով ու միջոցներով:

Հեղինակային խոսքում ճարտասանական հարցական նախադասությունները հիմնականում ներկայանում են որպես Անանյան-բնագետի, Անանյան-մարդու տարիներով կուտակած փորձի, գիտելիքների փոխանցման միջոց, կամ էլ հեղինակի քնարական խոհ, օրինակ՝ «Ախր ինչպե՞ս գոյացավ ու հոսեց ցեխն այն լեռներից, որոնց լանջերում ես միայն ծաղիկ ու կանաչ եմ տեսել և մեկ էլ ձյուն» /Կօմ,45/, «Իսկ դրանով մենք ձկներին չե՞նք զրկում սերունդ տալու հնարավորությունից» /ՄԱ,20/, «Ինչո՞ւ էր այդպես փոխվել մեր սրտաբաց Սաքո ամին» /Հվփր,110/:

Ճարտասանական հարցումը Վ. Անանյանի հերոսների խոսքում տիպականացման, խոսակցական իրական միջավայր ստեղծելու, հետաքրքիր խոսք կառուցելու արդյունավետ միջոց է: Այսպես՝ «Թռչունները աշնան վերջին կչվեն կգնան հարավ և նրանցից շատերը չռչնչանան ով գիտի որ աշխարհում Մուղանո՞ւմ, Իրանո՞ւմ, թե՞ Աֆրիկայում...» /ՄԱ,220/: «Եվ ի՞նչ ես կարծում, ինչի է էդքան շատ մաղ գալիս: Մեղրի կարոտից» /ՄԱ,236/, «- Ես հուսահա՞տ... Չէ...Ինչի՞ պիտի հուսահատ լինեմ, ձեզ պես ընկերներ ունեմ» /ՀԳ,84/:

Ընդ որում, Վ. Անանյանի օգտագործած այդպիսի ճարտասանական հարցաձևերի մեծ մասը ժողովրդական լեզվամտածողության արդյունք են: Մասնավորաբար նկատի ունենք կերպարների խոսքում դրանց բավականին հաճախ դրսևորվող այն տեսակը, երբ ժխտական կառույցով դրական, իսկ դրականով ժխտական, մերժողական միտք է արտահայտվում, հաղորդվում: Ժողովրդական խոսքին բնորոշ այս երևույթը, երբ «դրական ճարտասանական հարցերն ունին բացասական նշանակություն, իսկ բացասականները՝ դրական», ժամանակին դիպուկ նկատել է Մ. Աբեղյանը:[7] Այսպես՝ «...Լավ, Բագրատ էդպես խամ բան կանի՞ որ ... մինչև ճտերն աչքովս չտեսնեմ՝ ես ձու բաց կթողնե՞մ» /ՄԱ,116/:

Այստեղ բացասվող միտքն արտահայտվել է դրական կառույցի միջոցով՝ հերոսի խոսքը դարձնելով ավելի հատու,կարծիքը՝ անբեկանելի: Եթե հեղինակը փոխարենը օգտագործեր «չի անի» և «չեմ թողնի» ժխտական ստորոգյալներով կառույցը, ժխտման գաղափարը անշուշտ նույնքան ընդգծված չէր դրսևորվի, ինչպեսայս դեպքում. երբ դրական ճարտասանական հարցմամբ ժխտումը վերջնական է, մտափոխությունը՝ բացառված: Նման կառույցներում նախադասության ցանկացած անդամ, կախված խոսակցության բնույթից ու իրադրությունից, կարող է դրվել հարցման տակ. «Աշխարհում <u>կա՞</u> շուն, որ հանգիստ մնա այն պահին, երբ իր տերը վտանգի մեջ է...» /ՄԱ,66/, «<u>Ո՞ր</u> նկարիչը կարող էր կտավի վրա տալ այն նրբին ու ներդաշնակ, նրբերանգները» /ՄԱ,145/, «Ինչպե՞ս կարելի է առանց ակադեմիայի այսպիսի հնությունները կտրել իրենց միջավայրից...» /ՄԱ,215/, «Մեր մեջ նրանից շատ ո՞վ է ճնշվել» /Կօմ,58/, «Ո՞ւմ մտքով կանցներ, որ թշվառ այդ գեղջկուհու կրծքի տակ բաբախում է անձնուրաց բայլշևիկի սիրտը...» /Կօմ,183/:

Հակառակ երևույթը՝ ժխտական կառույցի միջոցով ճարտասանական հարցմամբ հաստատական միտք արտահայտելը, որը նույնպես առկա է Անանյանի ստեղծագործություններում ընդ որում, ինչպես հեղինակային, այնպես էլ հերոսների խոսքին՝ վերջինի գերակայությամբ:

Հեղինակային խոսքում սրանք հիմնականում քնարական շունչ ունեն, դառնում են հեղինակի քնարական խոհ՝ հարցական հնչերանգով. «... Ավելի շատ էր բորբոքվում իր մեջ հոմի կարոտը, մեր տարերի կարոտը: <u>Եվ ո՞նց չկարոտեա</u>» /Կօմ,7/ կամ՝ «Ասենք,

---

[7] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 555:*

Աբարատյան բերրի հողի՞ ո՞ր զառում ապպես չէ, անծանոթ մարդուն երբեմն նույնիսկ գյուղամիջով կապտությամբ քարշ են տալիս տուն...հյուրասիրելու» /ՀԳ,86/:

Ի տարբերություն հեղինակայինի, հերոսների խոսքում նման կառույցներով հաստատական միտք է արտահայտվում. «-Էնքան ագռավի ձվեր եմ խաշել-կերել... Բա ասես որա զոռը չի՞...»/ՄԱ,54/, «-Ուրեմն որսկան Ասատուրի քոռան գլխին վատախս չկա՞, որ ուրիշները նրանից առաջ ընկնեն...» /ՄԱ,185/, «Չորանը ես չե՞մ, որտեղ ուզենամ, էնտեղ էլ կարածացնեմ» /Կօմ,132/:

Ժխտական կառույցով հաստատում արտահայտող հարցական նախադասություններում շատ անգամ առկա է երկբայության նրբիմաստը, երբ արտահայտված մտքում կասկած կա. *«Ի՞նչ եք կարծում*, ա՞ռ բանը ձեր ուժերից վեր չէ՞,-հարցրեց ուսուցիչը» /ՄԱ,82/:

Երբեմն էլ ճարտասանական հարցումը տտանում է իր համար անսովոր գործառույթ՝ հանդես գալով իբրև հավաստիական հարցման պատասխան. «- Պապի՛, մորթին ի՞նչ հու ունեու: -էն որ Հասմիկից մատանու ակը խլեցիք-ուղարկեցիք թանգարան, կարծում եք ես նոան առանց նվեռի՞ եմ թողնելու» /ՄԱ,240/:

Մեր հաշվումներով Վ. Անանյանի հերոսներից ամենից շատ ծերունի Ասատուրի («Մանի ափին») խոսքում ենք հանդիպում ճարտասանական հարցական նախադասությունների: Փաստը պայմանավորված է նրանով, որ հեղինակը հերոսին համարում է խորհրդանշական կերպար: Նա ժողովրդական իմաստնության կրողն ու մարմնացումն է, որն իր երկարատև կենսափորձի արդյունքում ամբարած գիտելիքները փոխանցում է երեխաներին: Այդ փոխանցման լավագույն ու նախընտրելի միջոցներից մեկն էլ ճարտասանական հարցումն է, որով նախ կենտրոնացնում է իրեն շրջապատողների ուշադրությունը որևէ իրողության կամ երևույթի վրա, ապա տալիս է դրա մեկնաբանությունը: Օրինակ՝ «- Ապրես: Իսկ ինչի՞ է երդիս վախկոտ /բարդ-Ա.Ա./: Իրեն կարմիր գույնի պատճառով: Որ կողմը շարժվում է՝ հեռվից երևում է: Հիմի ձեզ եմ հարցնում, կարմիր բարդ իրեն էդ գունով կարո՞ղ է շաբաթներով թխես նստել դամշկուռում...» /ՄԱ,38/, «...Իսկ ըռթոթի մոր ահից ո՞վ կմտնի նրա բույնը... Էն տեսան ահռելի մոր ձագը իսեի առաջ մագեու եամ պաշտպանվելու կարոք ունի՞...» /ՄԱ, 105/: «-Ո՞նց կարող է ամեն ոան զրքերում լինի.-հարցրեց նա նեղացած: ...Դե թող ձեր գրքերն ասեն, թե էն լոդաղող ոստեռի մի մասն ինչո՞ւ է սիռում. փոմփոլավոր, հուրհրատին տալիս արևի տակ, իսկ մնացածները քարի գույնի, անշնորհք բաներ են» /ՄԱ,24/:

Ժողովրդական լեզուն գործառում է նաև հարցական նախադասության մի այլ տեսակ՝ կազմված *ով* դերանունով և դիմավոր բայաձևով, որը միշտ եզակի թիվ հրրորդ դեմքով է հանդես գալիս (ո՞վ գիտի, ո՞վ է տեսել, ո՞վ կտար և այլն): Սրանք զգայական վերաբերմունք արտահայտող միջանկյալ նախադասություններ են՝ հաճախադեպ իրակությունների Վ. Անանյանի ստեղծագործությունների լեզվում. «Ներքին ծնոտի վրա պարզ երևում է մեծ սպին: Ո՞վ գիտե ո՞ր ֆրոնտում մոլորված մի գնդակ ջարդել է ծնոտն ու իր հետ տարել ատամների առաջին շարքը» /Կօմ,114/, «-Անարխիա է՞, տո՛, ո՞վ է տեսել, որ առանց վարչության հանձայնության կոլխոզի հողամասը ցանկապատվի» /ՄԱ, 105/:

Սնում է ավելացնել, որ *«ո՞վ գիտե»* կապակցությունով հարցական նախադասությունները ավելի շատ հավաստիական հարցում է արտահայտվում, իսկ *«ո՞վ է տեսել», «ո՞վ կտար»* և նման կապակցություններով հարցականները՝ նաև ճարտասանական, երբ դրական կառույցով ժխտվող միտք է արտահայտվում. «-Վիհ, քոռանամ ես,-երեսը չանգռելով բացականչեց պառավը,- ո՞վ է տեսել, որ հանդի ձուն հավի տակը դնեն» /ՄԱ,95/:

Ժողովրդական խոսքին բնորոշ հարցական նախադասության դրսևորում պիտի համարել նաև սովորական նախադասություններում որոշ բառերի հարցական հնչերանգով այնպիսի գործածությունները, երբ խոսողը փորձում է իր կողմից ներկայացվող երևույթը, իրադարձությունը հավաստի և իրական դարձնել որևէ փաստի հիման վրա (սովորաբար այդ փաստը դիմացինի դրական, հաստատական վերաբերմունքն է ներկայացվող իրողության նկատմամբ): Հարցում արտահայտող բառերի դեպքում հանդես են գալիս հիմնականում տառորդալները պարզ (տեսա՞ր, տեսա՞ք, գիտե՞ս, մի՞տդ է (մի՞տքդ է), հիշո՞ւմ ես և նման այլ ձևեր), որոնք որպես ոճավորման միջոցներ՝

հերոսների խոսքը դարձնում են ավելի իրական ու անմիջական: Ինչպես՝ «Տեսա՞ր, պապի՛, որ ոչ երկրաշարժ եղավ, ոչ քամի բարձրացավ,- լուրջ պատասխանեց Գրիգորը» /ՄԱ,161/, «-Հողեմ նրա պրոֆեսոր գլուխը, տեսա՞ր ոնց կապ գցեցի...» /ՄԱ,217/, «Մի՞սդ է, որ մեղրի հոտից Ճանճաքարի ճակատն էիր բարձրացել» /ՄԱ,236/: Ի դեպ, սրանք որոշ առնչություն ունեն լրացական հարցական նախադասությունների հետ, և շատ դեպքերում կարող են ակնկալել պատասխան «այո» կամ «ոչ» պատասխանական բառերով:

Ճարտասանական հարցական նախադասությամբ երբեմն կարող է արտահայտվել նաև *հանդիմանանք:* Ինչպես նկատել է Ս. Աբրահամյանը, երբ «հարցական նախադասության մեջ հռետորականությունն ու հանդիմանությունը տեղ են գտնում միաժամանակ. հարցական նախադասությունն ունենում է և՛ մեկի, և՛ մյուսի տարրը, հատկանիշը»:[8] «-Ճանաչեցի՞ր, թե ով ես և ում զավակը,- հերթական հարվածը հասցրեց Աշոտը: Քո հայրը տաշած տուֆից երկու հարկանի տուն շինեց: Ո՞ւմ աշխատանքով, իսկի հարցրե՞լ ես, պիոներ Սարգիս...»/ՀԳ,119/: «Տղերք, բա փափախ չկա՞ ձեր գլխին, էգուց մեր աղջիկներին էլ կտանեն, բա տղամարդկություն չկա՞ ձեր մեջ» /Կօմ,52/: «Այ դանմազներ, տերություն ա, թուի ու թուփխանա ունի, ոնց քանի՞ գլխանի եր, որ թվանք եք քաշում տերության վրա» /Կօմ,52/:

Վ. Անանյանի վեպերում ճարտասանական հարցմամբ երբեմն կարող է արտահայտվել նաև *զայրույթ, ցասում,* հաճախ էլ՝ *զարմանք.* «Եվ դուք ձեզ նոմենկլատուրա՞ն եք համարում...» /ՄԱ,69/: «- Այ քեզ բան, առանց հոտի նոգի՞.-բացականչեց նա՝ մեջքը շոկելով» /ՄԱ,48/, «-Քոռանամ ես, այ տղա, բա ամբողջ օրը ո՞նց ես տված մնացել...» /ՄԱ,75/:

Նման հարցական նախադասություններում համապատասխան հնչերանգին զուգահեռ հաճախ առկա է նաև բացականչական հնչերանգը: Կարող են նաև հարցումից առաջ առկա լինել *զարմանալ, քար կտրել, ապշել* և նման իմաստ ունեցող բառեր, որոնցով էլ պայմանավորվում է նախադասության հետագա բովանդակությունը.

«Պապը զարմացավ: Այ քեզ բան...Այդ ի՞նչ անտեսանելի ուժ է օտի միջով թռչունին դեպի հոնն քաշում...» /ՄԱ,218/: «-Ի՞նչ, տահմանն անցե՞լ է. նոչե՞ր է տարածել:-Զարմանքից աչքերը չոռեց ցրտից կապտած պատանու վրա» /Կօմ,146/:

Վ. Անանյանն իր վիպական արձակում բավականին հաճախ ու հմտորեն է կիրառել հարցական նախադասության մի հետաքրքիր ձև, երբ հարցական նախադասությունը բնույթով հիշեցնում է *ներքին խոսք* և հանդես է գալիս որպես ուրիշի ներքին խոսք՝ հարցական հնչերանգով: Հիմնականում այդ հարցական նախադասություններն ուրիշի խոսք են, որ հեղինակային խոսքին կապվում են *մտածել, մտատանջվել, մտքով անցնել* և նմանիմաստ բառերով: Այսպես՝ «Կամոն լսում էր ու անհամբեր *մտածում.* «Ե՞րբ ենք փակելու այդ ենոց ոեռանը... Ե՞րբ ենք բացելու Սև ժայռի ու Գիսի ոնի զարտանիքենները...» /ՄԱ,217/, «Տեղում կանգնած *մտածեց, տատանվեց:* Է՛հ, ո՞վ էր գժվել մենակ ճամփա գնալ ժայռերով ու ձորերով... »/ՀԳ,22/, «Ինչի՞ է խեթում. չինի՞ թե սրիեան էիհ հենն է մնացել», *անցավ* պատանու *մտքով»* /Կօմ,236/:

Երբեմն հարցմանը նախորդող այդ հուշող բառերը կարող են զեղչված լինել. «Զարմացած նայում են ... պատանուն և «Կասդա՞ն, զարտանի ժողո՞վ» /Կօմ,89/: Այստեղ ընդգծված հարցումից առաջ *մտածում են* բայը զեղչված է, բայց հստակ գիտակցվում է: Սակայն այն կարող է նաև չգիտակցվել: Այնուամենայնիվ կառույցը չի դադարի հասկացվել որպես մտածական հարցական նախադասություն: Այդպես է նաև հետևյալ օրինակներում. «Օգնություն կանչել ընկերներին ամաչում էր /մտածում էր- Ա.Ա./, ի՞նչ ետսի այն առջևները» /ՄԱ,66/, «Ի՞նչ անեմ, ո՞ւր գնալ /մտածում էր- Ա.Ա./: Չէ՞ որ հուտոաջև էր ադա գիշեր թրուգինենոր գուտերոր հասցնել»: /Կօմ,69/, «Պատանիների սիրտը սեղմվում էր /մտածում էին-Ա.Ա./, ո՞ւր է տանում այդ խորհրդավոր անցքը» /ՄԱ,44/, «Վերջին դեպքերը նրան շշմեցրել էին /մտատանջվում էր-Ա.Ա./: Ո՞ւր մնացին ընկերները» /Կօմ,105/:

---

[8] *Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Եր., 1962, էջ 83:*

Մենք հակված ենք նմանատիպ նախադասությունները կոչել *մտածական հարցական նախադասություններ*, որոնցում հարցումը կարող է լինել և՛ հավաստիական, և՛ լրացական, և՛ ճարտասանական՝ դրսևորվելով յուրօրինակ ձևի՝ ներքին խոսքի միջոցով: Ինչ որ տեղ մտածական հարցական նախադասություններն առնչվում են ազատ անուղղակի խոսքին, բայց վերջիններիցս տարբերվում են թե՛ հարցական հնչերանգով, թե՛ բնույթով:

Մտածական հարցումը բնորոշ է ինչպես հեղինակային, այնպես էլ կերպարների խոսքին: Շատ հաճախ դա կարող է լինել ոչ թե մեկի մտածածը, այլ բոլորի խոհը, երբ որևէ խնդրի հանդիպելիս բոլորն էլ մտքում նույն հարցն են տալիս իրենք իրենց՝ իրարից անկախ: Այսպես՝ «Հետքը զննեցին /պատանիները-Ա.Ա./. իր ոտնատեղերով ետ չի եկել: Բաց ու՞ր է գնացել, հո երկինք չի թռել.../աղվեսը-Ա.Ա./» /ՍԱ,232/:

Մտածական հարցումը հաճախ կարող է զուգորդվել ճարտասանական հարցմանը՝ նախորդելով կամ հաջորդելով վերջինիս. «Ո՞ւր գնայ, ո՞ւմ դեմ, ինչի՞ համար: Ախր չէ՞ որ մերոնք են, հայ են, «հայր հայի դեմ»: Էլի կոմիսարի դեմ ոչինչ, կարելի է..., բայց դու արի Մարկոսենց Աթոյի վրա կրակիր, ախր *ո՞նց սպանես էն մարդուն*, որ կոմիսարի, տերտերի, զոռբաների ձեռքից փողը խլեց, քեզ տվավ» /Կօմ,171/:

Հարցական նախադասությունների համառոտ քննությունը վկայում է. Վ.Անանյանը ժողովրդական բառ ու բանի հմուտ օգտագործող է, որը կարողացել է վարպետորեն մշակել ժողովրդականին բնորոշ լեզվաձևերը և դրանք ճաշակով ու հմտորեն կիրառել գեղարվեստական գրականության մեջ՝ դարձնելով այդ տարրերը գրական լեզվի ճոխ հարստության անտրոհելի բաղադրամասը:

Համառոտագրություններ

ԿՕՄ –Վ.Անանյան, Կրակն օղակի մեջ, Եր., 1930:
ՀՎՓԹ - Վ.Անանյան, Հին վրանի փոքրիկ բնակիչը, Եր., 1978:
ՀԳ - Վ. Անանյան, Հովազածորի գերիները, Եր., 1984:
ՍԱ - Վ.Անանյան, Սևանի ափին, Եր., 1953 և 1970:
ՈՒՏԿ- Վ. Անանյան, Ո՞ւր են տանում կածանները, Եր., 1980:

ВОПРОСИТЕЛЬНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В РОМАНИЧЕСКОЙ ПРОЗЕ В. АНАНЯНА

___ *Резюме* ___ ___ *А. Авагян* ___

В. Ананян в своих произведениях смог искусно употребить не только три основные виды вопроса (утвердительные, пояснительные и риторические), но благодаря своеобразному языкомышлению в вопросительных предложениях, он ввел новые модели: двуборотные и многоборотные утвердительные вопросы, мыслительные вопросительные предложения. Благодаря своему общенародному языкомышлению, писателю удалось применить разнообразные проявления вопросительных предложений, способствующих образности героев-персонажей и созданию прозаической атмосферы в своих произведениях.